



**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ, ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,  
«ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ», «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ  
ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2019 թվականի օգոստոսի 9-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հանրային քննարկման է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը:

Ստորև ներկայացնում ենք վերոնշյալ օրենսդրական նախագծերի փաթեթի վերաբերյալ Իրավաբանների հայկական ասոցիացիայի (այսուհետ նաև՝ ԻՀԱ) և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի (այսուհետ նաև՝ Կոալիցիա) փորձագիտական նկատառումները:

**I. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

1. Բովանդակային իմաստով խնդրահարույց է Նախագծով առաջարկվող դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում առաջարկվող փոփոխությունը, որն, ըստ էության, գրեթե ամբողջությամբ կրկնում է ներկայումս գործող օրինադրույթը: Հետևապես, բացարձակապես անիմաստ է դրա ներառումը Նախագծի մեջ:

2. Մտավախություն է առաջացնում նաև դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 16-րդ կետով առաջարկվող փոփոխությունը, որով նախատեսվել է դատավորի պարտականությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու գույքի փոփոխությունը հիմնավորող պատշաճ նյութերը: Բանն այն է, որ վկայակոչված օրինադրույթը որևէ կերպ չի հստակեցնում՝ ո՞ր փոփոխությունն է ենթակա հայտարարագրման դատավորի կողմից, չի նախատեսում դրա որոշման որևէ չափորոշիչ: Արդյունքում խնդրո առարկա իրավակարգավորումն իրականում կարող է պարզապես անհարկի վարչարարության իրականացման հիմքեր ձևավորել, որը բացարձակապես արդարացված չէ: Հետևապես, անհրաժեշտ է լրացուցիչ իրավադրույթով բացահայտել «գույքի փոփոխություն» եզրի հասկացությանին բովանդակությունը:

3. Անհասկանալի է Դատական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 10-րդ և 12-րդ կետերն ուժը կորցրած ճանաչելու տրամաբանությունը: Դրանք վերաբերում են դատավորի վարքագծի այնպիսի կանոններին, ինչպիսիք են՝

*Բարեխղճորեն և լիարժեք կատարել իր պաշտոնեական պարտականությունները, համագործակցել դատարանի աշխատակազմի և այլ դատավորների հետ.*

*Ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու հմտությունների շարունակական կատարելագործումը.*

*դատական նիստերը վարել պատմուճանով:*

4. Որևէ էական, բովանդակային փոփոխություն չեն առաջացնում նաև Նախագծով առաջարկվող Դատական օրենսգրքի 70-րդ հոդվածի 14-րդ և 18-րդ կետերով առաջարկվող փոփոխությունները: Ինքնաբացարկի դեպքերում դրանք բացահայտելու պարտականությունն, այսպես թե այնպես, նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ (**ՀՀ դատական օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մաս**), ուստի այս մասով լրացուցիչ իրավակարգավորման անհրաժեշտությունը բացակայում է:

5. Նախագծով առաջարկվող ՀՀ դատական օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումն արդարացված չէ բազմաթիվ ելակետերի հաշվառմամբ: Սկզբունքորեն նվիրառության սահմանափակումն առանց դա կապելու պաշտոնեական պարտականությունների իրացման փաստի հետ անհամատեղելի է անձի իրավական կարգավիճակի և տվյալ նորմով հետապնդվող նպատակի հետ: Առավելևս, երբ նույն հոդվածը նախատեսում է որոշակի շեմը գերազանցող նվերների ստացման մասին կարգապահական

հարցերի հանձնաժողով հայտնելու դատավորի պարտականությունը: Նման պայմաններում խնդրո առարկա մոտեցումն ակնհայտորեն ծայրահեղ է և համահունչ չէ նորմ-հետապնդվող նպատակ-համաչափություն հաջորդական կապի իրավական կառուցակարգին: Պետք է ընդունել, որ դատավորը ևս հասարակության անդամ է և կարող է ստանալ նվերներ այն դեպքում, երբ ողջամտորեն չի ընկալվում, որ այն կապված է իր պաշտոնական պարտականությունների իրականացման հետ, որպիսի չափանիշը նախատեսված է գործող օրենսգրքում: Մինչդեռ, առաջարկվող կարգավորմամբ բացարձակ արգելքի սահմանումն ընդունելի համարվել չի կարող:

6. Դատական օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի առաջարկվող խմբագրության վերջնամասում առկա է խմբագրական վրիպակ՝ «հոդված» բառի կրկնակի կիրառմամբ՝ «սույն հոդվածի 7-րդ հոդվածում»: Անհրաժեշտ է կիրառել «սույն հոդվածի 7-րդ հոդվածում» բառերը: *(Նախագծի 10-րդ հոդված)*

7. Հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամի թեկնածուին վերաբերող պահանջները բացարձակապես որոշակիացված չեն, ինչը բնականաբար, կարող է հիմքեր ձևավորել վարչական անհարկի հայեցողության դրսևորման համար: Հետևապես, անհրաժեշտ է օրենսդրորեն որոշակի չափանիշներ առաջադրել այդ թեկնածուների համար՝ նկատի ունենալով նշված հանձնաժողովի կարևոր գործառնությանին առաքելությունը: Առավել ևս, երբ նրանց ընտրությունը, համաձայն նախագծի եզրափակիչ և անցումային դրույթների իրականացվելու է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

8. Դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 6-րդ մասում առաջարկվող փոփոխությունն առաջացնում է խնդրո առարկա նորմի մեկնաբանման հետ կապված լրացուցիչ խնդիրներ այն իմաստով, որ դրա խմբագրությամբ պարզ չէ նիստերի դոնբաց լինելու համար անպայման պահանջվում է արդյոք ԲԴԽ անդամի կամ դատավորի միջորդությունը: Հստակեցված չէ նաև այդ միջնորդության նշանակությունը համապատասխան որոշման կայացման համար:

9. Խնդրահարույց է նաև Դատական օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչելն այն պարագայում, երբ դրանում նախատեսվում է դատարանի իրավագործության հետ կապված չափազանց կարևոր դրույթ, որի համաձայն՝ ***Որպես դատարան***

*հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավագոր է անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:* Նշված դրույթն էական երաշխիք է Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու պարագայում կարգապահական պատասխանատվության ենթարկվող դատավորին իրավական լրացուցիչ երաշխիքներ տրամադրելու իմաստով: Մինչդեռ, դրա գործողության դադարեցումը, մեր համոզմամբ, որևէ կերպ հիմնավորված չէ:

10. Որևէ տեսակետից հիմնավոր չէ նաև դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով առաջարկվող փոփոխությունն առ այն, որ դատավորին և ԲԴԽ անդամների կարգապահական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ որոշումների ընդունման համար պահանջվող ձայների համամասնությունն էականորեն տարբերվում է այլ որոշումների դեպքում պահանջվող համամասնությունից: Ընդ որում, բացարձակապես հիմնավորված չէ նման տարբերակիչ համամասնությունն ապահովելու գաղափարական ելակետերը:

11. Դատական օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող փոփոխությունը ևս որևէ կերպ համարժեք հիմնավորված չէ: Սկզբունքորեն անընդունելի է դատավորների տարիքային շեմի նվազեցումը և պահանջվող աշխատանքային ստաժի իջեցումը: Սա մասնագիտական աշխատանք է, որն անպայմանորեն ենթադրում է նաև որոշակի կենսափորձի ու աշխատանքային առավել պատկառելի կենսագրության առկայություն: Մեր կողմից կատարված միջազգային փորձի ուսումնասիրությամբ պարզվեց (*տես 1-ին հավելվածը*), որ երկրների գերակշիռ դեպքում տարիքային ցենզը հասնում է մոտ 30-ի, իսկ այն երկրներում, որտեղ սահմանված է 25-ը՝ միևնույն ժամանակ ամրագրված են լրացուցիչ պայմաններ, ինչպես օրինակ՝ 5 տարվա աշխատանքային ստաժի առկայությունը կամ այլ պայմաններ:

Պետք է նաև նկատի ունենալ, որ գործող կարգավորումների պայմաններում ստացվում է, որ դատավորի հավակնորդի թեկնածուին ներկայացվող մասնագիտական աշխատանքի փորձառության ժամկետը հավասարեցվում է դատավորի օգնականի թեկնածուի համար ներկայացվող մասնագիտական աշխատանքի փորձառության ժամկետին, ինչն ակնհայտ է, որ ընդունելի համարվել չի կարող: Հետևապես, նման իրավակարգավորումն իրականում ավելի շատ առաջացնում է խնդիր, քան հավակնում լուծել ոլորտում առկա իրական մարտահրավերները:

12. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ կառուցակարգերում որևէ նոր բան չի ավելացնում «ակնհայտ ու կոպիտ» բառերի

վոխարինումը «դիտավորությամբ կամ կոպիտ անվտուրությամբ» բառերով: Ըստ էության, այն դարձյալ ենթադրում է հայեցողական ու անորոշ գնահատում ու սկզբունքորեն չի համադրվում իրավական որոշակիության գաղափարի հետ: Այդ համատեքստում պետք է նկատի ունենալ, որ կարգապական նորմերի ամեն մի խախտում չէ, որ կարող է կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսանալ, այլ միայն այնպիսի խախտումները, որոնք կարող են վտանգի տակ դնել դատական իշխանության անկախությունը և հեղինակությունը, դատավարության մասնակիցների հիմնարար իրավունքները<sup>1</sup>: Գործող օրենսդրական կարգավորման դեպքում սահմանված՝ «ակնհայտ ու կոպիտ» չափանիշը հնարավորություն է տալիս որոշակիացնելու կարգապահական պատասխանատվության քննարկվող հիմքը: Մինչդեռ օրենքի նախագծով առաջարկվող կարգավորման պարագայում ստացվում է, որ նյութական կամ դատավարական նորմի ցանկացած խախտում կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության: Այն որևէ կերպ համադրելի չէ նաև հանրային վստահության վրա հիմնված դատական իշխանություն ձևավորելու ՀՀ Գաղափարության տեսլականի հետ:

Պետք է նկատի ունենալ, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը չպետք է հանգեցնի դատավորի անկախության սկզբունքի նկատմամբ միջամտության: Այդ սկզբունքն ամրագրված է մի շարք միջազգային պայմանագրերում և կոնվենցիաներում: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում են, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Տարիների ընթացքում մի շարք իրավական փաստաթղթեր են ընդունվել, որոնք կոչված են եղել երաշխավորելու դատավորների անկախությունը և անաչառությունը և կանխարգելելու դատարանների գործունեության վրա անհարկի ազդեցությունները<sup>2</sup>:

**13.** Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի առաջարկվող խմբագրությունն ակնհայտորեն ավելի անորոշ է դարձնում քննարկվող իրավակարգավորումը, քան առկա է այն այս պահին: Դրանում որպես էական խախտումը բացահայտող հատկանիշներ նախատեսվել են այնպիսիք, ինչպիսիք են մարդու իրավունքների հիմնարար խախտումը կամ դատական

---

<sup>1</sup> St' u Acquaviva Naïs, Castagnet Florence and Evanghelou Morgane: A Comparative Analysis of Disciplinary Systems for European Judges and Prosecutors, prepared for the 7th edition of the European Judicial Training Network's THEMIS Competition, 2012, pp. 2-3.

<sup>2</sup> St' u par 19.2 i of the OSCE's 1991 Moscow Document (Document of the Moscow Meeting of the Conference on the Human Dimension of the CSCE of 4 October 1991).

իշխանության հեղինակագարկումը՝ այնպիսի հասկացություններ, որոնք բացարձակ անորոշ են դատավորի իրավունքների հետագա համարժեք պատշապանության տեսակետից:

14. Նույն դատողությունը վերաբերում է նաև վարքագծի կանոնների խախտմանը վերաբերող ձևակերպմանը, որը որպես կարգապահական պատասխանատվության կիրառման անհրաժեշտ պայման՝ նախատեսում է ոչ միայն դրանց խախտման փաստն ինքնին, այլ նաև դատավորի կարգավիճակի հետ այդ խախտման անհամատեղելիությունը, ինչը դարձյալ առաջացնում է լրացուցիչ գնահատման խնդիր: *(Նախագծի 142-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետ):*

15. Ավելին, ինչպես տեսնում ենք, նախագծից հանվել է ներկայումս գործող այն իրավակարգավորումը, որ արդարադատություն իրականացնելու կապակցությամբ միջամտության մասին Բարձրագույն դատական խորհրդին չհայտնելը դիտվում է որպես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինքնավար հիմք, ինչը խիստ մտահոգիչ է: Նույնը վերաբերում է նաև պարտադիր վերապատրաստման պարտավորությանը: Նման վարքականոնների խախտումների հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը կախվածության մեջ դնել դատավորի կարգավիճակի հետ այդ խախտման անհամատեղելիության գնահատումից, մեր համոզմամբ, որևէ իրավական իմաստ չի ենթադրում:

16. Դատական օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի առաջարկվող 4-րդ կետի իրավակարգավորման առարկայի համատեքստում խնդրահարույց է այն հարցի պարզաբանումը, թե ինչպիսի՞ չափանիշներով է որոշվելու հարուցել կարգապահական վարույթ ՀՀ մասնակցության գործող միջազգային դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյոքում խախտում արձանագրելու գործընթացում: Ակնհայտ է, որ անհարկի հայեցողական ռիսկերի գեներացումը որևէ կերպ չի նպաստում դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը: Հետևապես, անհրաժեշտ է օրենսդրական ակտի մակարդակում հստակեցնել այս հիմքով վարույթի հարուցման որոշակի օրենսդրական չափորոշիչներ:

17. Դատական օրենսգրքի 149-րդ հոդվածի 3-րդ մասի առաջարկվող փոփոխությունները դարձյալ խնդրահարույց են նորմերի իմաստային ընկալման, դրանց պատշաճ խմբագրության իմաստով: Մասնավորապես, նախագծով փաստացի առաջարկվում է նշված նորմի հետևյալ ձևակերպումը.

Եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք կիրառելու կամ դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատվելուց հետո երկու տարվա ընթացքում, խիստ նկատողություն ստանալու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, նկատողություն ստանալու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կամ նախագրուշացում ստանալու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, դատավորը չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության, ապա նա համարվում է կարգապահական տույժ չունեցող:

Ակնհերս է, որ իմաստային առումով նորմի բովանդակությունը չի ընկալվում:

**18.** Պետք է նկատել, որ Դատական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասում այսպես թե այնպես գործածվում են «ուշադրության արժանի այլ հանգամանքներ» բառերը, հետևապես դիտավորությունը կամ կոպիտ անփութությունն այստեղ ևս ներառելը գործնականում անիմաստ է:

**19.** Դատական օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվող փոփոխության առաջին երեք նախադասություններն ամբողջությամբ կրկնում են գործող կարգավորումը, ուստիս դրանց լրացուցիչ ամրագրման անհրաժեշտությունը բացակայում է:

**20.** Նախագծով ըստ էության, կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորը գրկվել է համապատասխան որոշումը անհատական սահմանադրական գանգատի միջոցով վերանայելու իրավունքից (Նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ կետ): Փոխարենը, նախատեսվել է աննախադեպ մի բան. ԲԴԽ-ի կայացրած համապատասխան որոշումը բողոքարկվում է հենց ԲԴԽ, ընդ որում, բացառապես այն դեպքերում եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը դատավորը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով և որը ողջամտորեն կարող է ազդել որոշման վրա: Սա խնդրահարույց է դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրացման ինչպես ներպետական, այնպես էլ կոնվենցիոնալ չափանիշների առարկայացման տեսակետից: Պետք է նկատի ունենալ, որ պատասխանատվության ենթարկված դատավորը պետք է ամբողջովին օգտվի արդար դատաքննության իրավունքից և կայացրած որոշումն արդյունավետ բողոքարկելու իրավունք ունենա<sup>3</sup>:

---

<sup>3</sup> Տե՛ս UN Basic Principles on the Independence of the Judiciary, adopted by the Seventh United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders held at Milan from 26 August to 6 September 1985 and endorsed by General Assembly resolutions 40/32 of 29 November 1985 and 40/146 of 13 December 1985, pars 17 and 20. See also Recommendation CM/Rec(2010)12 of the Committee of Ministers to Member States on Judges:

Երկիրը	Տարիքային չափորոշիչներ	Պահանջվող մասնագիտական հմտությունները
Էստոնիայի Հանրապետություն	Նվազագույն տարիք սահմանված չէ:  Դատավորը կարող է պաշտոնավարել մինչև 67 տարեկանը, այս տարիքը հետագայում կարող է երկարաձգվել:	<ul style="list-style-type: none"> <li>• Էստոնիայի քաղաքացիություն.</li> <li>• Իրավագիտության մագիստրոսի աստիճան.</li> <li>• Էստոներենի գերազանց իմացություն.</li> <li>• Դատավոր աշխատելու համար պահանջվող բարձր մասնագիտական և մարդկային հատկանիշների առկայություն: <sup>4</sup></li> </ul>
Ռուսաստանի Դաշնություն	Նվազագույնը 25 տարեկան:  Դաշնային դատարանների դատավորները ցմահ են պաշտոնավարում:	<ul style="list-style-type: none"> <li>• Բարձրագույն իրավաբանական կրթության առկայություն.</li> <li>• Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ.</li> <li>• Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն.</li> <li>• ՌԴ օրենսդրությամբ վճռաբեկ և սահմանադրական դատարանների դատավորների թեկնածուների գործունեության համար ավելի երկար մասնագիտական ստաժի պահանջ է ներկայացված:<sup>5</sup></li> </ul>
Վրաստանի Հանրապետություն	Նվազագույն տարիք է սահմանված 30 տարեկանը:	<ul style="list-style-type: none"> <li>• Նվազագույնը 5 տարի մասնագիտական ստաժի առկայություն:</li> </ul>

Independence, Efficiency and Responsibilities (adopted by the Committee of Ministers on 17 November 2010 at the 1098th meeting of the Ministers' Deputies), par 69, and the European Charter on the Statute for Judges (Strasbourg, 8-10 July 1998), adopted by the European Association of Judges, published by the Council of Europe, [DAJ/DOC (98)23], par 5.1. See further the Kyiv Recommendations, par 26 (op cit footnote 13).

<sup>4</sup> Տեղեկատվությունը հասանելի է սույն հղմամբ՝ [https://e-justice.europa.eu/content\\_legal\\_professions-29-ee-maximizeMS-en.do?member=1](https://e-justice.europa.eu/content_legal_professions-29-ee-maximizeMS-en.do?member=1)

<sup>5</sup> Տեղեկատվությունը հասանելի է սույն հղմամբ՝ <https://www.icj.org/cijlcountryprofiles/russian-federation/russian-federation-judges/russian-federation-appointment-and-promotion-of-judges-security-of-tenure/#footnote-27>



		<ul style="list-style-type: none"> <li>• Բարձրագույն իրավաբանական կրթության առկայություն:<sup>6</sup></li> </ul>
Ադրբեջանի Հանրապետություն	<p>Նվազագույն տարիք 30:</p> <p>Ադրբեջանում դատավորները նշանակվում են 5 տարի ժամկետով և տարին մեկ անգամ պետք է վերապատրաստումներ անցնեն: Եթե վերապատրաստումները բարեհաջող են անցնում դատավորի պաշտոնավարման ժամկետը երկարաձգվում է մինչև 65 տարեկանը: Բացառիկ դեպքերում, դատավորի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 50 տարեկանը, եթե նրա գործունեությունը արդարադատության իրականացման համար անհրաժեշտություն է հանդիսանում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:</li> <li>• Բարձրագույն իրավաբանական կրթություն:</li> <li>• Նվազագույնը 5 տարվա մասնագիտական շտաժ:</li> <li>• Միայն Ադրբեջանի քաղաքացի հանդիսանալու պահանջ:<sup>7</sup></li> </ul>
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	<p>Նահանգներից յուրաքանչյուրն է, որոշում դատավորի նվազագույն տարիքը: Դաշնային մակարդակով նվազագույն տարիք սահմանված չի:</p>	<p>Ամերիկյան իրավաբանների միությունը սահմանել է, որ յուրաքանչյուր ոք, ով Միացյալ Նահանգներում ցանկանում է դատավոր դառնալ, պետք է իրավաբան աշխատելու մասնագիտական քննություն հանձնի (bar exam) և նվազագույն</p>

<sup>6</sup> Տեղեկատվությունը հասանելի է սույն հղմամբ՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2019\)002-e#targetText=Article%2063.6%20Judge%206..defined%20by%20the%20organic%20law](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2019)002-e#targetText=Article%2063.6%20Judge%206..defined%20by%20the%20organic%20law).

<sup>7</sup> Տեղեկատվությունը հասանելի է սույն հղմամբ՝ [file:///C:/Users/User/Downloads/Azerbaijan\\_Courts\\_Judges\\_Act\\_1997\\_am\\_2006\\_en.pdf](file:///C:/Users/User/Downloads/Azerbaijan_Courts_Judges_Act_1997_am_2006_en.pdf)

		12 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունենա: <sup>8</sup>
Սլովենիայի Հանրապետություն	Նվազագույնը 30 տարեկան:  Պաշտոնավարում են մինչ 64 տարեկանը:	<ul style="list-style-type: none"> <li>• Սլովենիայի քաղաքացիություն.</li> <li>• Պետք է նախ քան քակարյակաբար, նախ մագիստրատուրայում ունենա իրավաբանի որակավորում.</li> <li>• Պետք է սահմանված կարգով դատավորի մասնագիտացման քննություններ հանձնի<sup>9</sup>:</li> </ul>
Ավստրիական Հանրապետություն	Նվազագույն տարիք սահմանված չէ:  Դատավորները թոշակի են անցնում 65 տարեկանում:	<ul style="list-style-type: none"> <li>• Ավստրիայի քաղաքացիություն.</li> <li>• Իրավաբանական կրթություն.</li> <li>• Նվազագույնը 5 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ:<sup>10</sup></li> </ul>
Չեխիայի Հանրապետություն	Նվազագույնը 30 տարեկան:  Պաշտոնավարում է մինչև 70 տարեկանը:	<ul style="list-style-type: none"> <li>• Չեխիայի քաղաքացիություն.</li> <li>• Իրավագիտության մագիստրոսի աստիճան.</li> <li>• Հատուկ դատավարական քննությունների հանձման հավաստագրի առկայություն:<sup>11</sup></li> </ul>
Հունաստանի Հանրապետություն	Նվազագույնը 28 տարեկան:  Պաշտոնավարում են մինչև 67 տարեկանը:	<ul style="list-style-type: none"> <li>• Հունաստանի քաղաքացիություն.</li> <li>• 2 տարվա աշխատանքային փորձ, եթե թեկնածուն չունի գիտական աստիճան, 1 տարվա աշխատանքային փորձ, եթե թեկնածուն ունի գիտական աստիճան:</li> </ul>

<sup>8</sup> Տեղեկատվությունը հասանելի է սույն հղմամբ՝ [https://e-justice.europa.eu/content\\_legal\\_professions-29-si-maximizeMS-en.do?member=1](https://e-justice.europa.eu/content_legal_professions-29-si-maximizeMS-en.do?member=1)

<sup>9</sup> Տեղեկատվությունը հասանելի է սույն հղմամբ՝ [https://e-justice.europa.eu/content\\_legal\\_professions-29-si-maximizeMS-en.do?member=1](https://e-justice.europa.eu/content_legal_professions-29-si-maximizeMS-en.do?member=1)

<sup>10</sup> Տե՛ս [https://www.unified-patent-court.org/sites/default/files/upc-national-eligibility-criteria\\_final.pdf#targetText=According%20to%20the%20Constitution%2C%20Supreme,1960\)%2C%20as%20ame%20anded%5D](https://www.unified-patent-court.org/sites/default/files/upc-national-eligibility-criteria_final.pdf#targetText=According%20to%20the%20Constitution%2C%20Supreme,1960)%2C%20as%20ame%20anded%5D).

<sup>11</sup> Տե՛ս [https://www.unified-patent-court.org/sites/default/files/upc-national-eligibility-criteria\\_final.pdf#targetText=According%20to%20the%20Constitution%2C%20Supreme,1960\)%2C%20as%20ame%20anded%5D](https://www.unified-patent-court.org/sites/default/files/upc-national-eligibility-criteria_final.pdf#targetText=According%20to%20the%20Constitution%2C%20Supreme,1960)%2C%20as%20ame%20anded%5D).

		<ul style="list-style-type: none"> <li>• Պետք է ավարտած լինի դատավորների համար նախատեսված դպրոցը:<sup>12</sup></li> </ul>
Հունգարիայի Հանրապետություն	Նվազագույնը 30 տարեկան:  Պաշտոնավարում է մինչև 65 տարեկանը:	<ul style="list-style-type: none"> <li>• Դատավորների համար նախատեղված որոկավորման քննությունների հանձնում:</li> <li>• Նվազագույնը 1 տարվա մասնագիտական ստաժի առկայություն:</li> <li>• Բարձրագույն իրավաբանական կրթության առկայություն:</li> </ul>
Լատվիայի Հանրապետություն	Նվազագույնը 30 տարեկան:  Պաշտոնավարում է մինչև 70 տարեկանը:	<ul style="list-style-type: none"> <li>• Բարձրագույն իրավաբանական կրթություն:</li> <li>• Նվազագույնը 5 տարվա մասնագիտական ստաժի առկայություն:</li> <li>• Հանձնել է դատավորների համար նախատեսված որակավորման քննությունները:</li> </ul>
Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն	Նվազագույնը 25 տարեկան:  Պաշտոնավարում է մինչև 68 տարեկանը:	<ul style="list-style-type: none"> <li>• Նվազագույնը մագիստրոսի գիտական աստիճանի առակայություն.</li> <li>• 2 տարվա դատական դասընթացների հաճախելու վերաբերյալ դիպլոմ:</li> <li>• Օրենքով սահմանված կարգով դատարանի քարտուղարի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ տեղեկանք:</li> </ul>
Սլովակիայի Հանրապետություն	Նվազագույնը 30 տարեկան:  Պաշտոնավարում է մինչև 65 տարեկանը:	<ul style="list-style-type: none"> <li>• Բարձրագույն իրավաբանական կրթություն.</li> <li>• Դատավարների համար նախատեսված որակավորման քննության հանձնում:</li> </ul>
Լիսստանի Հանրապետություն	Նվազագույնը 29 տարեկան:  Պաշտոնավարում է մինչև 69	<ul style="list-style-type: none"> <li>• Նվազագույնը մագիստրոսի գիտական աստիճանի</li> </ul>

<sup>12</sup> Տես նույն տեղում:

	տարեկանը:	առկայություն: • Հանձնել է դատավոր դառնալու համար պահանջվող պետական քննությունները:
--	-----------	--

II. «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
ՆԱԽԱԳԻԾ

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի և դրա հիմնավորման համաձայն (այսուհետ՝ Նախագիծ)՝ «2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը պարունակում է կոռուպցիայի կանխարգելման որոշ մեխանիզմներ, սակայն **այդ մեխանիզմները, ոլորտի զարգացման համատեքստում, շարունակյալ փոփոխությունների կարիք ունեն՝ հաշվի առնելով օրենքի կիրառման արդյունքում գործնականում առաջացող խնդիրները**։ Ընդհանուր առմամբ համակարծիք լինելով վերոգրյալի հետ, հարկ ենք համարում նշել, որ հակակոռուպցիոն ոլորտում **«շարունակական փոփոխությունների կարիք ունենալը»** ոչ թե պայմանավորված է միայն կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմների անկատարությամբ, այլև կոռուպցիայի դեմ պայքարում ինստիտուցիոնալ համակարգերի բացակայությամբ։ Ավելին, սույն նախագծով ևս այս հարցին ինստիտուցիոնալ մակարդակում լուծում չի տրվում։ Խոսքը գնում է այն մասին, որ ներկայումս մշակվող հակակոռուպցիոն նոր ռազմավարությամբ նախատեսվում է, որ պետք է ընդլայնվեն կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործառույթները՝ 5-ը դարձնելով 13, մինչդեռ վերոնշյալ նախագծով Հանձնաժողովի լիազորությունները ավելացվում են ընդհամենը 3-ով։ Ակնհայտ է, որ հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմինն պետք է վերապահվեն ոչ միայն մոնիթորինգի գործառույթները, այլ նաև հակակոռուպցիոն կրթական ծրագրերի կազմման, հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման իրականացման, հակակոռուպցիոն ոլորտում հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման ու դրանց համակարգման, հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանն օժանդակության խնդիրները։ Հանձնաժողովը պետք է ապահովվի հակակառուպցիոն քաղաքականության մշակման և կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված բոլոր գործիքներով, բացառությամբ նախաքննական և օպերատիվ-հետախուզական գործառնությունների իրականացման, ինչը նախագծում արված չէ։ Արդյունքում ստացվում է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար մղելու կոնտեքստում մշակված երկու իրավական ակտերի նախագծերում առկա են հակասություններ և ապահովված չէ սիներգիա։

*Առաջարկում ենք ապահովել օրենքի և հակակոռուպցիոն ռազմավարության նախագծերի միջև սիներգիան և օրենքի նախագծում ներառել ռազմավարությամբ Հանձնաժողովին վերապահվող գործառույթների ամբողջական ցանկը:*

2. Նախագծի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի՝ Հանձնաժողովի կազմավորման վերաբերյալ գործող կարգավորումները ***բավականին խորթն են և, գործնականում, խոչընդոտել են Հանձնաժողովի կազմավորման գործընթացին:*** Անդրադառնալով Հանձնաժողովի կազմավորման գործընթացի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների արձագանքին՝ հարկ է նշել, որ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի մոնիթորինգի 4-րդ փուլի «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» վերտառությամբ 2018 թվականի զեկույցով (այսուհետ՝ Զեկույց) արձանագրվել է, որ Մոնիթորինգ իրականացնող թիմը մտահոգված էր՝ տեղեկանալով, ***որ մարմնի ստեղծման և Մրցութային խորհրդի անդամների ընտրության գործընթացի շուրջ տարաձայնություններ կան: Մասնավորապես, Մոնիթորինգի թիմի այցելության ժամանակ մի խումբ հասարակական կազմակերպություններ մտահոգություն են հայտնել Մրցութային խորհրդի անդամների առաջադրման և ընտրության գործընթացի, ինչպես նաև վերջիններիս մասնագիտական կարողությունների վերաբերյալ:*** Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու Հանձնաժողովի ձևավորման կարգը՝ միաժամանակ ամրապնդելով Հանձնաժողովի գործիքակազմը:» Հարկ ենք համարում արձանագրելու, որ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի մոնիթորինգի 4-րդ փուլի «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» վերտառությամբ 2018 թվականի զեկույցին կատարված հղումը թերի է և միակողմանի: Մասնավորապես, զեկույցում նշվում է նաև. «Այդուհանդերձ ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան մրցութային խորհրդի ընտրության գործընթացը համարում է բաց և թափանցիկ»: Այնուհետև, զեկույցում տեղ գտած վերոնշյալ դիտարկումներն ուսումնասիրելով ՏՀԶԿ-ն Հայաստանին առաջարկել է. «Ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ***նշանակման թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, որը զերծ կլինի ցանկացած միջամտությունից, ներառյալ՝ քաղաքական, և որ գործընթացը կղիտվի որպես օբյեկտիվ հասարակության լայն շերտերի կողմից:*** Այսպիսով պարզ է դառնում, որ նախագծում որպես հիմնավորում զեկույցից մեջբերված հաստատված թերի է, միակողմանի, մանիպուլյատիվ և ոչ օբյեկտիվ, ինչպես նաև չի արտացոլում զեկույցով Հայաստանին տրված ամբողջական հանձնարարականը:

*Առաջարկում ենք խմբագրել նախագծի հիմնավորման նշյալ հատվածը և ներկայացնել Հանձնաժողովի կազմավորման վերաբերյալ գործող կարգավորումների խրթին լինելու փաստը հաստատող պատշաճ իրավական հիմնավորումներ:*

3. Կարևորելով Հանձնաժողովի ձևավորման ապաքաղաքական, անկողմնակալ և չեզոք գործընթացը՝ հարկ ենք համարում նշել հետևյալը. նախագծի եզրափակիչ և անցումային դրույթներով սահմանված կարգավորումների համաձայն՝ (...) **Հանձնաժողովի առաջին կազմը ձևավորում է Ազգային ժողովը՝ Կառավարության, Ազգային ժողովի խմբակցությունների, Բարձրագույն դատական խորհրդի առաջադրած թեկնածուներից՝ համապատասխանաբար 6 տարի, 4-ական տարի և 3 տարի պաշտոնավարման ժամկետներով**, ինչը խիստ մտահոգիչ է, քանի որ ստացվում է, որ Հանձնաժողովի առաջին կազմը ձևավորվում է ոչ մրցութային կարգով՝ քաղաքական միջամտության հնարավոր ռիսկերով: Իսկ նախագծով մրցութային խորհրդի կազմավորմանը վերաբերող օրենսդրական կառուցակարգը կիրառելի է համարվում ոչ թե անմիջապես, այլ *միայն 2021 թվականի հունվարի 1-ից*: Նման իրավակարգավորումը որևէ կերպ չի ապահովում հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմնի կազմավորման նոր տրամաբանություն և փոլիսոփայություն, ինչն էականորեն խնդրահարույց է: Ակնհայտ է, որ ի սկզբանե հարկավոր է հնարավորության սահմաններում ձեռնամուխ լինել հանձնաժողովի կազմավորման համար սահմանված մրցութային կարգի կենսագործմանը: Հիշյալը բխում է ինչպես վերը նշված ՏՀԶԿ հանձնարարականից՝ *«Ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների նշանակման թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, որը գերծ կլինի ցանկացած միջամտությունից, ներառյալ՝ քաղաքական, և որ գործընթացը կդիտվի որպես օբյեկտիվ հասարակության լայն շերտերի կողմից»*, այնպես էլ Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությունից, ըստ որի՝ *հակակոռուպցիոն գործակալությունների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրանց ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը:*

*Առաջարկում ենք անցումային և եզրափակիչ դրույթներից հանել Հանձնաժողովի առաջին կազմի ձևավորման ոչ մրցութային կարգը և երաշխավորել Հանձնաժողովի անդամների ընտրության անկախ, ապաքաղաքական, չեզոք և անկողմնակալ գործընթացը:*

4. Առաջարկվող կարգավորմամբ Խորհուրդը կազմված է լինելու *Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ), Ազգային ժողովի խմբակցությունների կողմից նշանակված մեկական անդամներից*: Հարկ ենք համարում

նշել, որ Օրենքի նոր նախագծին կից հիմնավորում չի ներկայացվել, թե ինչ հիմքերով են ընտրվել Խորհրդի անդամներին նշանակող մարմինները:

Խորհրդի կազմում ՄԻՊ-ից և ԲԴԽ-ից ներկայացուցիչներ ունենալն ինքնին դրական քայլ է, ավելին՝ այն բխում է հենց Կոալիցիայի առաջարկություններից (Կոալիցիան, մասնավորապես առաջարկել էր՝ հաշվի առնելով Հայաստանում սահմանադրական դատարանի շուրջ առաջացած խնդիրները, Խորհրդի անդամ հանդիսացող ՄԴ ներկայացուցչին փոխարինել ԲԴԽ ներկայացուցչով), սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ **ՀՀ Սահմանադրության 174-րդ հոդվածի համաձայն՝ ԲԴԽ-ն կազմված է տասն անդամից, այսինքն ԲԴԽ-ն կոլեգիալ մարմին է, հետևաբար, անհասկանալի է, թե ինչու է ԲԴԽ նախագահին վերապահվում Խորհրդի կազմում անդամ առաջադրելու իրավունքը:**

Առաջարկում ենք, որ ԲԴԽ-ն Խորհրդում իր ներկայացուցչին ընտրելիս առաջնորդվի համախոհության սկզբունքով և ՀՀ Սահմանադրությանը համապատասխան հանդես գա որպես կոլեգիալ, ոչ թե միանձնյա մարմին:

5. Առաջարկվող կարգավորմամբ **Խորհրդի հինգ անդամներից երեքին նշանակում են ԱԺ խմբակցությունները՝** հաշվի առնելով, որ ներկայումս ԱԺ-ում ներկայացված խմբակցությունների թիվը երեքն է: Արդյունքում ստացվում է, որ Խորհրդի անդամների թվաքանակը հարմարեցված է գործող ԱԺ կազմում ընդգրկված քաղաքական ուժերի թվաքանակին: Նման մոտեցումը, հետագայում, կարող է բարդություններ առաջացնել: Օրինակ՝ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունների թվաքանակի փոփոխության հետևանքով պետք է փոխվի նաև Խորհրդի անդամների թվաքանակը, որը կխոչընդոտի Խորհրդի բնականոն գործունեությունը (օրինակ՝ քվեարկություն, նիստերի անցկացում): Իր հերթին, խորհրդի բնականոն գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտություն կառաջանա օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Բացի այդ, **Հանձնաժողովի գործունեությունը քաղաքական միջամտությունից զերծ պահելու տեսանկյունից անհրաժեշտ է, որ իշխող քաղաքական ուժը Հանձնաժողովի գործունեության վրա ազդեցություն ունենալու լծակներով օժտված չլինի,** այլապես կխախտվի Հանձնաժողովի անկախության սկզբունքը:

**Առաջարկում ենք բացառել Խորհրդում ԱԺ 3 խմբակցություններին անդամ առաջադրելու իրավունքի տրամադրումը, փոխարենն անհրաժեշտ է ընթացակարգ սահմանել, որի համաձայն Խորհրդում անդամ առաջադրելու իրավունքը կտրամադրվի ընդդիմադիր խմբակցություններին:**

6. Անհասկանալի պատճառներով, մրցութային խորհրդի կազմից դուրս են մնում **սահմանադրական մարմին հանդիսացող Հանրային խորհուրդն ու Փաստաբանների պալատը:**



Հիշյալը վերահաստատում է մեր այն դիրքորոշումը, որ հակակոռուպցիոն համակարգի ձևավորման գործընթացից հետևողականորեն դուրս են թողնվում քաղաքացիական հասարակության ինստիտուտներին, ինչի արդյունքում Հանձնաժողովը կդառնա ամբողջությամբ վերահսկելի բացառապես իշխանության կողմից, իսկ հասարակական ոլորտը հնարավորություն չի ունենա իր անմիջական մասնակցությունն ունենալու և հասարակության խնդիրները համակարգված ներկայացնելու ու մշտադիտարկում իրականացնելու համար:

**Առաջարկում ենք փոփոխություններ կատարել Հանձնաժողովի մրցութային խորհրդի կազմում անդամներ նշանակող կառույցների ցանկում՝ նման լիազորություն տալով ստորև թվարկված մարմիններին.**

1. **Բարձրագույն դատական խորհուրդ՝** որպես դատական իշխանության ներկայացուցիչ,
2. **Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցություններ՝** որպես օրենսդիր իշխանության ներկայացուցիչներ,
3. **ՀՀ կառավարություն՝** ի դեմս սահմանադրական մարմին հանդիսացող Հանրային խորհրդի, որի 15 անդամները նշանակվել են վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ որպես գործադիր իշխանության ներկայացուցիչ,
4. **Մարդու իրավունքների պաշտպան՝** որպես սահմանադրական կարգավիճակ ունեցող՝ մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևող,
5. **Փաստաբանների պալատ՝** որպես քաղաքացիական հասարակության մասնագիտական անկախ ինստիտուտ:

7. Ինչպես «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ *Խորհուրդը կազմակերպում և անցկացնում է Հանձնաժողովի անդամի թեկնածուի ընտրության մրցույթ (մրցույթ կամ նոր մրցույթ):* Այսպես, ինչպես «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին ՀՀ օրենքով, այնպես էլ Նախագծով հստակ կարգավորված չէ, թե Հանձնաժողովի անդամի նոր մրցույթի անցկացման դեպքում արդյո՞ք այն անցկացնելու նույն Մրցութային խորհուրդը, թե՞ ձևավորվելու է նոր մրցութային խորհուրդ:

**Առաջարկում ենք նախագծով հստակեցնել, որ հանձնաժողովի յուրաքանչյուր նոր անդամի ընտրության դեպքում ձևավորվում է նոր Մրցութային խորհուրդ, որի անդամներին նշանակում են նույն հինգ սուբյեկտները:**

8. Նախագծի 1-ին հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն *Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ, առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող և հայերենին տիրապետող*

*յուրաքանչյուր ոք, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը բարձրագույն տնտեսագիտական կրթություն:* Գտնում ենք, որ հակակոռուպցիոն ռազմավարությամբ և նախագծով Հանձնաժողովին վերապահվող նոր լիազորությունների արդյունավետ իրականացումը ենթադրում է նեղ մասնագիտական՝ իրավաբանական գիտելիքներ, օրինակ՝ ՄԻԵԴ որոշումների խախտման հիմքով կարգապահական վարույթի հարուցում, առանձին դեպքերում Հանձնաժողովի անդամի կողմից անմիջապես ԲԴԽ-ին միջնորդության զեկուցում և այլն, որոնք բացառապես իրավաբանական աշխատանք են: Այս իրողության հաշվառմամբ՝ *առաջարկում ենք նախատեսել հանձնաժողովի անդամների մեծ մասի (5 անդամներից 4-ի ղեկավարում) իրավաբանական բարձրագույն կրթություն ունենալու պահանջը:*

9. Նախագծով խնդրահարույց է նաև հանձնաժողովի նախագահի ընտրության կարգ չսահմանելը: Եթե սույն նախագծի հեղինակները Հանձնաժողովի առաջին կազմի նախագահին նշանակելու գործընթացը պատկերացնում են այն կարգավորումներով, որոնք նախատեսված են Ազգային ժողովի կողմից հունիսի 25-ին առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի կողմից ներկայացված *«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով*, գտնում ենք, որ հիշյալ նախագիծը շարունակվում է գնահատվել որպես խնդրահարույց (այս նախագծի վերաբերյալ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան հանդես է եկել հայտարարությամբ, որի կարող էք ծանոթանալ այստեղ՝ <https://armla.am/44019.html>) և Նախագծի հեղինակները չպետք է առաջնորդվեն դրանով և Հանձնաժողովի նախագահի ընտրության իրավունքը պետք է վերապահվի կոլեգիալ մարմնին՝ Հանձնաժողովին ընդանուր ձայնի մեծամասնությամբ: Նմանատիպ մեխանիզմի ներդրումը Հանձնաժողովին զերծ կպահի քաղաքականացվելու վտանգից և այս փուլում որոշակի առումով կերաշխավորի Հանձնաժողովի ձևավորման վերջնական փուլի անաչառ գործընթացը:

10. Գործող օրենսդրական կարգավորումների համաձայն Հանձնաժողովի անդամ կարող է *նշանակվել պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք, ով ունի բարձրագույն կրթություն, առնվազն տասը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և ճանաչում:* Հանձնաժողովի անդամին ներկայացվող հիշյալ պահանջները օրենքում ներառվել են Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջարկությունների հիման վրա, որի նպատակն էր ապահովել անդամի մասնագիտական փորձը, ամբասիր վարքն ու բարձր հեղինակությունը:

Ջակարտայի սկզբունքներից է Հանձնաժողովի մասնագիտացված աշխատակազմը: Ըստ այդմ՝ **Հանձնաժողովի ղեկավար կազմը և աշխատակազմը պետք է ձևավորվի հստակ սահմանված չափորոշիչների վրա՝ հիմքում ունենալով անձի մասնագիտական փորձառությունը և արհեստավարժությունը, բարեխղճությունը (Բարեխղճությունը = հաշվետվողականություն և թափանցիկություն + էթիկա + կոմպետենցիա - կոռուպցիա):**

Իսկ առաջարկվող փոփոխությունների համաձայն՝ Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն **Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ, առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող (որից առնվազն երեք տարին ղեկավար պաշտոններում՝պետական մարմնի կամ դրա աշխատակազմի կամ կազմակերպության ղեկավարի կամ նրանց տեղակալների կամ պետականմարմնի կամ կազմակերպության ներքին միավորի ղեկավարի աշխատանքային ստաժ կամ այնպիսի պաշտոններում աշխատանքային ստաժ, որը իրականացնում է աշխատանքների կազմակերպման, ղեկավարման, վերահսկման կամ համակարգման գործառույթներ) և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:**

Կարծում ենք, որ առաջարկվող փոփոխություններով նվազեցվում է անդամին ներկայացվող մասնագիտական փորձառության պահանջը, որի արդյունքում տպավորություն է ստեղծվում, որ այդ պահանջները հարմարեցված են կոնկրետ անձանց համար, և նրանց նշանակման գործընթացը կուղղորդվի բացառապես հայեցողական որոշումներով: Այստեղ իրավացիորեն հարց է առաջանում, ի՞նչ հիմքով և ո՞ւմ առաջարկով է այս կարևոր և պատասխանատու պաշտոնի համար մասնագիտական փորձի առկայությունը տաս տարուց նվազեցվել հինգ տարվա:

**Առաջարկում ենք գործող օրենքով Հանձնաժողովի անդամին ներկայացվող մասնագիտական փորձառության պահանջները թողնել անփոփոխ:**

11. Նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել գործող օրենքի 13-րդ հոդվածի 14-24-րդ մասերը, որոնք վերաբերում են Հանձնաժողովի անդամի մրցութային կարգի թեստային փուլին: Ստացվում է, որ, այսուհետ, մրցույթն անցկացվելու է ոչ թե երեք փուլով՝ փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգման փուլ, երկրորդը՝ թեստավորման, իսկ երրորդը՝ հարցազրույցի, այլ երկու փուլերով, դրանով իսկ հնարավորություն չտալով մրցութային խորհրդին գրավոր ձևով ստուգելու թեկնածուի մասնագիտական փորձառությունն ու արհեստավարժությունը:

*Առաջարկում ենք գործող օրենքով Հանձնաժողովի անդամի ընտրության համար անցկացվող մրցույթի թեստավորման փուլին վերաբերող կարգավորումները ուժը կորցրած չճանաչել:*

12. Նախագծով երաշխավորված չէ Հանձնաժողովի հանրային հաշվետվողականություն սկզբունքը: Գտնում ենք, որ Հանձնաժողովը պետք է ինտեգրված լինի գալիչների և հակակշիռների համակարգում՝ ժողովրդավարական կառավարում ապահովելու համար: Նշենք, որ Ջակարտայի սկզբունքներից է ներքին և արտաքին հաշվետվողականությունը, հանրային հաղորդակցությունը և ներգրավվածությունը: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:* Ըստ էության, սա ոչ թե հաշվետվողականության և վերահսկողության գործիք է, այլ կոչված է ապահովելու Հանձնաժողովի գործունեության թափանցիկությունը: Որպես «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի ապահովման ուղղված միջոց, առաջարկում ենք նախագծով սահմանել մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից վերահսկողություն իրականացնելու ռեալ մեխանիզմ՝ հասարակական վերահսկողության իրականացման խորհուրդ:

13. Լրացուցիչ հիմնավորման է ենթակա նաև հանձնաժողովին բանկային գաղտնիքի ստացման մասով ոչնչով չկաշկանդված հայեցողության տրամադրումը: Բանն այն է, որ Նախագծի հիմնավորման մեջ անգամ շարադրված երկրների ճնշող մեծամասնությունում հակակոռուպցիոն մարմինն վերապահված է այդպիսի դերակատարում, բացառապես այն պարագայում, երբ վերջինս իրականացնում է նաև նախաքննական կամ ապօրինի ակտիվների բռնագանձմանն ուղղված գործողություններ: Մինչդեռ, ակնհայտ է, որ նշված լիազորություններից և ոչ մեկով Հանձնաժողովն օժտված չէ: Ավելին, հենց հիմնավորման մեջ ուղղակիորեն նշվել է, որ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների գնահատման ծրագրի 4-րդ փուլի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցում առաջարկել է Հայաստանին վերանայել և ուսումնասիրել հետաքննության ընթացքում բանկային, ֆինանսական, առևտրային գաղտնիության վերացման կարգավորումները և դրանց կիրառման եղանակները և համոզվել, որ այդ գործընթացը պարզ է և արդյունավետ և չի խոչընդոտում կոռուպցիոն դեպքերի բացահայտմանը: *Հետևապես,*

*կարծում ենք՝ որ այս մոդելն արդյունավետ կարող է գործել բացառապես անկախ ունիվերսալ միասնական մարմնի ձևավորման պարագայում: Հակառակ դեպքում բանկային գաղտնիքին լիարժեք հասանելիության ապահովումը չունի միևնույն արդյունավետության աստիճանը:*

14. Նախագծով նախատեսված է հետևյալը. Հայտարարագրերի վերլուծության գործընթացում Հանձնաժողովն իրավասու է հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանցից պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն առաջարկի հեղինակը հանդիսանում են ԻՀԱ-ն և Կոալիցիան, գտնում ենք, որ այն թերի է և նկատի ունենալով դրա արդյունավետության մակարդակը ու հայաստանյան համատեքստը (*հաճախ գույքը և եկամուտները գրանցվում կամ փոխանցվում են անձանց, ովքեր փոխկապակցված չեն և չունեն խնամիական հարաբերություններ հայտարարատու անձի հետ: Օրինակ՝ վարորդը, ընկերը*), հարկավոր է լրացնել իրավիճակային հայտարարագիր ներկայացնող անձանց ցանկը:

Առաջարկում ենք վերանայել հայտարարագրերի վերլուծությամբ զբաղվող մարմնի լիազորությունները և տրամադրել վերջինիս իրավասություն՝ ցանկացած քաղաքացուց պահանջելու իրավիճակային հայտարարագիր: Առաջարկում ենք նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում և տալ «խնամի» եզրույթի սահմանումը:

III. «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

1. Ինչպես արդեն նշվել է, խնդրահարույց ենք համարում բոլոր դեպքերում ու անվերապահ հիմունքներով նվերների ընդունման արգելքի սահմանումը: Տվյալ դեպքերում անհրաժեշտ է կատարել առավել խորը և համապարփակ ուսումնասիրությունն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի առաջարկվող խմբագրությամբ նախատեսված արգելքի բացարձակ բնույթը լրացուցիչ հիմնավորելու համար:

2. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված է հետևյալը. **Հայտարարագրերի վերլուծության գործընթացում Հանձնաժողովն իրավասու է հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիրությամբ կապված անձանցից պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն առաջարկի հեղինակը հանդիսանում են ԻՀԱ-ն և Կոալիցիան, գտնում ենք, որ սույն լրացումը պետք է կատարվի նաև «Հանրային ծառայության մասին» օրենքում: Միաժամանակ գտնում ենք, որ հիշյալ փոփոխությունը թերի է և նկատի ունենալով դրա արդյունավետության մակարդակը ու հայաստանյան համատեքստը (*հաճախ գույքը և եկամուտները գրանցվում կամ փոխանցվում են անձանց, ովքեր փոխկապակցված չեն և չունեն խնամիական հարաբերություններ հայտարարատու անձի հետ: Օրինակ՝ վարորդը, ընկերը*), հարկավոր է լրացնել իրավիճակային հայտարարագիր ներկայացնող անձանց ցանկը:

Առաջարկում ենք նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ և նախատեսել իրավիճակային հայտարարագրերի ինստիտուտը, ինչպես նաև՝ տալ «խնամի» եզրույթի սահմանումը:

IV. «ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

1. Օրենքի 7-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը խիստ վիճահարույց է: Այն, ըստ էության, հիմքեր է ձևավորում չկատարված աշխատանքային պարտականությունների դիմաց ստանալու աշխատավարձ և օգտվելու սոցիալական բոլոր երաշխիքներից, ինչը որևէ կերպ հիմնավորված չէ: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է ձևավորել օրենսդրական հիմքեր Սահմանադրական դատարանի ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կառուցակարգի կյանքի կոչման համար, բայց ընտրված լուծումը դրա համար մեղմ ասած, ամենահաջող գործիքը չէ: Այն առերևույթ առաջացնում է սահմանադրականության հետ կապված խնդիրներ ևս: Հետևապես, անհրաժեշտ է Սահմանադրական դատարանի կազմավորման ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կառուցակարգը կյանքի կոչել իրավունքի տեսության համար ընկալելի գործիքակազմի կիրառմամբ:

2. Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվող փոփոխությունը ևս որևէ կերպ հիմնավորված չէ: Նախ, դրանում ամբողջ ծավալով փոփոխվում է ներկայումս գործող նույն օրինադրույթի բովանդակությունը և դրա բովանդակային ծավալից դուրս են մղվում այնպիսի կարևոր դրույթներ, ինչպիսիք են, օրինակ, դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին ՄԴ նախագահի և գլխավոր դատախազի իրազեկումը, նրանց մուտքի անարգել ապահովումը դատավորի պահման վայր:

3. Բացի այդ, որևէ կերպ բացահայտված չէ արդյոք այս պարագայում դատավորի լիազորությունների կասեցումը հիմքեր է ձևավորում այդ պաշտոնում նոր դատավորի ընտրության համար: Խնդիրը կարևորվում է այն հանգամանքի հաշվառմամբ, որ հնարավոր է այդպիսի քրեական գործեր հարուցվեն մի քանի դատավորների նկատմամբ, ինչի պարագայում կարող է առաջանալ Սահմանադրական դատարանի գործառության առաքելության կենսագործման փակուղի:

4. Սկզբունքորեն խնդրահարույց է նաև Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվող իրավակարգավորումը, որն ըստ էության, ոչ այլ ինչ է, քան հայեցողական ռիսկերի գեներացում: Բանն այն է, որ դրանով էական կարգապահական խախտումը հասկացությունը կախվածության մեջ է դրվել այնպիսի վերացական կատեգորիաներից, ինչպիսիք են նշված խախտման անհամատեղելիությունը դատավորի կարգավիճակի հետ՝ կախված կատարման հանգամանքներից և առաջացրած հետևանքներից: Նման մոտեցումը, բնականաբար, անընդունելի է դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

5. Ինչ վերաբերում է Օրենքի 14-րդ հոդվածի ամբողջական խմբագրությանը, ապա պետք է նկատի ունենալ, այն գրեթե ամբողջությամբ կրկնում է «Սահմանադրական դատարանի մասին» գործող սահմանադրական օրենքով և ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով սահմանված իրավակարգավորումները: Այն սուկ նորմերի մեխանիկական կրկնություն-վերարտադրություն է:

**V. «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

1. Օրենքի 115.1-ին հոդվածի շրջանակներում նախատեսվել է, որ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին իր գործառույթների իրականացման կապակցությամբ տեղեկատվության տրամադրումը չի համարվում բանկային գաղտնիքի հրապարակում, մինչդեռ, ակներև է, որ պետք է այս պարագայում նշված լիներ «ապահովագրական գաղտնիքի հրապարակում» այնքանով, որքանով նշված օրենքը չի կարգավորում բանկային գաղտնիքին առնչվող հարաբերությունները:

**VI. «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ  
ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

1. Որևէ կերպ հիմնավորված չէ Օրենքով սահմանված այն մոտեցումը, որի համաձայն՝ ԲԴԽ նախագահի պաշտոնային դրույքաչափը պետք է իջեցվի և հավասարեցվի ԲԴԽ անդամի պաշտոնային դրույքաչափին այն դեպքում, երբ վերջինս դատական իշխանության անկախությունը երաշխավորող մարնի ղեկավարն է: Նախագծի հիմնավորման մեջ այս առումով ևս որևէ հիմնավորում առկա չէ:

**VII. «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**



1. Օրենքի 1-ին հոդվածում առկա հղման մեջ, թերևս, առկա է բացթողում: «151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 5-րդ կետերով» բառերով, քանի որ Դատական օրենսգրքի առաջարկվող 151-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետով հարկադիր կատարման ենթակա որևէ ակտի կատարում նախատեսված չէ:

## **VIII. «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

1. Ակններև է, որ Արդարադատության ակադեմիայի կառավարման մարմինը բացառապես Խորհուրդն է, որն այս պարագայում պետք է ողջամտորեն հանդես գա ցանկացած առարկայական ծրագրի կազմման և որպես պարտադիր դասընթաց ներառման միակ պատասխանատու: Առավելևս, երբ նույն օրենքի 19-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ծրագրի մեջ պետք է ընդգրկվեն նաև՝

- 1) կրթական չափորոշիչները.
- 2) ուսուցման ձևը.
- 3) ուսումնառության ժամաքանակը և ժամկետը, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի.
- 4) գնահատման եղանակը, եթե ուսուցման ավարտին նախատեսվում է գնահատում.
- 5) դասավանդվող առարկայական կուրսերի և դրանցում ներառվող թեմաների նկարագիրը:

Նման պայմաններում պարտադրել ակադեմիայի խորհրդին այս կան դասընթացը ներառել ծրագրի մեջ, ուղղակիորեն հակասում է նույն օրենքով սահմանված Խորհրդի կարգավիճակին: (Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս, 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ):

Ընդ որում, առաջարկվող կարգավորման խոցելիությունն ակնհայտ է դառնում հատկապես այն իրողության հաշվառմամբ, որ այն ենթադրում է Օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ հոդվածով նախատեսված բոլոր սուբյեկտների՝ Ուսումնական հարցերի հանձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի, գլխավոր դատախազի, քննչական կոմիտեի նախագահի, հատուկ քննչական ծառայության պետի կամ արդարադատության նախարարի որպես անհրաժեշտ որակված բոլոր առարկաների պարտադիր ներառում վերապատրաստման ծրագրերում: Բնականաբար, նշված կարգավորումն իմաստագրկում է Խորհրդի՝ կրթական քաղաքականության մշակման հարցում ունեցած կարգավիճակը:

**IX. «ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

1. Ակնհայտ է, որ անհրաժեշտ է փոփոխել օրենսգրքի 314.2-րդ հոդվածի բովանդակությունը «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով բառերը» փոխարինելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով:

2. Մեր համոզմամբ, կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանող նշված հավելվածը պետք է ուժի մեջ մտնի «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի և համապատասխան հարակից նախագծերի ուժի մեջ մտնելու հետ միաժամանակ:

**Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա  
Իրավաբանների հայկական ասոցիացիա**